ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

Արարատի մարզի Արալեզի ԲԱ ՀՈԱԿ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման
«*ԱԲԱ-ԳՀԱՊՁԲ-25/01*» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

Գ.Արալեզ <<24>> <<01>> 2025 թ Ժ.՝ 16.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Բ. Սողոյան

Անդամներ Ն. Ալեքսանյան

Լ. Կոստանյան

Մ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Հակոբյան

1.Տեղեկություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին

1.1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովը բաղկացած է չորս անդամից և հանձնաժողովի նիստին մասնակցում են հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու» թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, հանձնաժողովի նիստը համարել իրավազոր և հայտարարել բացված:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

2. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պարզաբանումների վերաբերյալ

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել,հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

3.**Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները**

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար
1	<<Ալֆա Ֆարմ>> ՓԲԸ	Ք. Երևան Շիրակի , 1/68	060700500 tender@alfapharm.am

4. «*ԱԲԱ-ԳՀԱՊՁԲ-25/01*» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են Արարատի մարզ գ. Արալեզ *Ե.Չարենցի 10 հասցեում*: Ընդունել ի գիտություն, որ հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

2. Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3. Տվյալներ պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը առկա են:Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու» թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 21-րդ ենթակետը և հրավերի 8.2-րդ կետը հայտերի գնահատումը իրականացնել 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել հայտերի գնահատումը ավարտելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ժամը 11:00 ,որը տեղի կունենա գ. Արալեզ *Ե.Չարենցի 10* հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0